Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

Armenian Territorial Development Fund

25 հունիսի, 2018թ. № 435

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝
պարոն՝ Մ. Անանյանին

Հարգելի պարոն Անանյան,

Ի կատարումն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 18.06.2018թ. կայացված թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/64 որոշման, տեղեկացնում ենք, որ 22.06.2018թ. գնահատող հանձնաժողովի նիստով որոշվեց «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ի հայտը համարել հրավերի պահանջներին անբավարար և դադարեցնել առաջին տեղ զբաղեցրած և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները:

Ինչպես նաև գնահատող հանձնաժողովի նիստով որոշվեց «ՋԲՄ-ԱՇՁԲ-2018/3» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ հաջորդ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ «ԱԱԲ Պրոյեկտ» ՍՊԸ-ին:

Ի լրումն նաև տեղեկացնում ենք, որ «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ-ն դիմել է դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 18.06.2018թ. կայացված թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/64 որոշումը (կից ներկայացվում է հիմնավորումը):

Խնդրում ենք պարզաբանել, արդյոք վերոնշյալ հանգամանքը կարող է հանդիսանալ խոչընդոտ մրցույթի գնահատման և պայմանագրի շնորհման գործընթացները շարունակելու համար:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝

Գործադիր տնօրեն՝ Ա. Կիրակոսյան

Կատարող՝ Լիլիթ Սեդրակյան
Հեռ. 060 501 560 ներքին 510

Հայաստանի Հանրապետություն, 0037, Երևան, Կ.Ուլնեցու 31
31K.Ulnetsu Str., 0037, Yerevan, the Republic of Armenia

☎ (+37460) 501 560
E-Mail: atdf@atdf.am